Հաշվետվություն

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման՝ 2016-2020 թթ.

ռազմավարական ծրագրի 2018-19 ուստարվա կատարողականի վերաբերյալ

2016-20 թթ. ռազմավարական ծրագրով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր համար սահմանել է հատուկ առաքելություն՝ նպաստել հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանը անհրաժեշտ մասնագետներով համալրելուն և նրա մշակութային կյանքի զարգացմանը: Մասնաճյուղի գործունեության կարևորագույն նպատակներից է որակյալ բարձրագույն կրթություն ապահովելու միջոցով տարածաշրջանում զարգացնել բնական, հումանիտար, սոցիալ-տնտեսական գիտություններն ու մշակույթը:

Իր նպատակների իրականացման համար մասնաճյուղը.

- ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր,
- ապահովում է ուսանողների՝ բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,
- ուսանողներին և աշխատողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր,
- իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովում է որակի անընդհատ բարելավում՝ բուհի գործուն և արդյունավետ վարչարարության և կառավարման միջոցով և այլն:

Ռազմավարական պլանով մինչև 2020 թ.-ը մասնաճյուղն իր առջև դրել է 9 կարևորագույն նպատակ՝ 25 խնդիրներով և 141 գործողություններով, որոնց կատարման համար սահմանված են հստակ ժամկետներ, պատասխանատու կառույցներ և անձինք:

Այժմ ձեր ուշադրությանն եմ ներկայացնում Ծրագրի՝ 2018-19 ուստարվա կատարողականը, որի ընթացքում ըստ ժամանակացույցի պետք է իրականացվեին 98 գործողություններ: Նշենք, որ դրանցից 22-ը (շուրջ 23%-ը) իրականացվել են, 60-ը՝ (շուրջ 61%-ը) կատարման ընթացքի մեջ են և պետք է ավարտվեն մինչև 2020 թ.-ի վերջը: Պլանավորված գործողություններից 16-ի շրջանակներում դեռևս անհրաժեշտ

գործընթացներ չեն իրականացվել՝ պայմանավորված մի շարք ներքին և արտաքին պատճառներով, մասնավորապես՝ Մայր բուհի համապատասխան ձեռնարկումներով:

Մինչև անդրադարձը առանձին նպատակներին նշենք, որ մասնաճյուղը 2018-19 ուստարվա ընթացքում խնդիրների իրականացման մեջ գրանցել է 70-80% կատարողական:

Մասնավորապես՝ մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումները արդյունավետ իրականացրել են **առաջին՝ «Որակյալ կրթություն» նպատակի** պլանավորված 14 գործողությունների **74%-ը:**

1. Այդ նպատակի իրականացման ճանապարհին մասնաճյուղի կարևոր ձեռքբերումն է իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի հաստատումը: Մասնաճյուղի 6 կրթական ծրագրեր արտաքին փորձաքննություն են անցել ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներում, իսկ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը՝ Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ծրագիրը՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Արտաքին փորձագետների դրական կարծիքների հիման վրա այդ կրթական ծրագրերը հաստատվել են մասնաճյուղի գիտական խորհրդում:

2. Մասնաճյուղն արձագանքում է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին: 2018-19 ուստարվա ընթացքում մշակվել և ներդրվել է նոր՝ «Ռուսաց լեզու և գրականություն», վերաբացվել են «Հոգեբանություն» ու «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրերը: Դրանց հիման վրա կազմակերպվել է ընդունելություն: Նշենք, որ բակալավրի կրթական ծրագրերը կազմելիս կիրառվել են դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից մոտեցումներ (**ՌԾ 1.2.4**):

3. ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար պ-ն Գևորգյանի և Տավուշի մարզպետ պ-ն Չոբանյանի համատեղ քննարկումների արդյունքում ՀՀ Ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ կիրականացվեն գյուղատնտեսական ոլորտի մի շարք համատեղ կարճատև վերապատրաստման ծրագրեր մարզի ֆերմերների և այլ գործատուների համար: Կստեղծվի նաև հողի, ջրի, անասունների կերի և գյուղմթերքների

անալիզների հետազոտական լաբորատորիա, որը վճարովի ծառայություններ կմատուցի տարածաշրջանի շահակիցներին:

4. Ուժեղացման կարիք ունի բնագիտական մասնագիտությունների թիվը, մասնավորապես «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրն իրականացնող դասախոսական կազմը, որի հարցում ակնկալում ենք ԵՊՀ-ի աջակցությունը՝ ի դեմս բնական և ճշգրիտ գիտությունների գծով պրոռեկտոր պ-ն Բարխուդանյանի:

5. Դիմել ենք լիցենզավորման՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական ծրագրի ներդրման նպատակով: Հուսով ենք, որ ընդունելություն կկազմակերպենք եկող ուսումնական տարում:

6. Մասնաճյուղը արդյունավետ համագործակցում է ՀՀ կենտրոնական բանկի ուսումնագիտական կենտրոնի հետ, որի հետ համագործակցության շրջանակներում վերանայվել և արդյունավետ իրականացվում է «Ֆինանսներ» կրթական ծրագիրը, իսկ նրա առաջնակարգ աշխատակիցներից մի քանիսը դասավանդում են մասնաճյուղում: Նրանց հետ համագործակցությամբ բավականին արդյունավետ իրականացվում են նաև ուսանողների արտադրական պրակտիկաները:

7. Կարևոր ձեռքբերում են նաև մասնաճյուղի արդեն բոլոր դասընթացների համար կիրառվող դասընթացների փաթեթները՝ համալրված որակի ապահովման համապատասխան մեխանիզմներով (**ՌԾ 1.2.5**):

8. Ֆակուլտետներում ստեղծվել են որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական խմբեր (**ՌԾ 1.3.1**): Նրանք աջակցում են կրթական ծրագրերի ղեկավարներին, հետամուտ են ուսանողական հարցումների արդյունքներին և ապահովում են հետադարձ կապը: Նրանց աջակցությամբ ՄԿՈԱ բաժինն իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ:

Հարցում է կազմակերպվել մարզում՝ մասնաճյուղի վերաբերյալ հասարակայնության կարծիքը և ներսից անտեսանելի խնդիրները բացահայտելու համար: Ուրախալի է նշել, որ հասարակայնության շրջանում մասնաճյուղի վարկանիշը բավականին բարձր է, և մասնաճյուղ դիմելու հիմնական պատճառները որակյալ և բարձր կրթության տրամադրումն է, բուհի ապահովվածությունը բարձրորակ մասնագետներով, և նրանք կարծում են, որ մասնաճյուղում կրթություն ստանալը բավականին օգնում է հետագա

կարիերայի կառուցմանը, հատկապես մարզի ներսում, քանի որ մարզի գործատուների մոտ մասնաճյուղի շրջանավարտների հանդեպ որոշակի դրական կարծիք է ձևավորված (**ՌԾ 1.2.6**):

Չի գործադրվել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը, որովհետև այն պայմանավորված է ԵՊՀ պորտալում դասընթացների և ծրագրերի գնահատման մասնաճյուղի մասնաբաժնով, որը դեռևս հատկացված չէ: Սակայն ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժինը մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի քննարկմանն է ներկայացրել **«Դասընթացի գնահատման հարցաթերթ»-ի** մեր տարբերակը (**ՌԾ 1.3.4.**), որը նաև քննարկվել է ամբիոններում, հավաքագրվել են դասախոսների կարծիքներն ու առաջարկները, այն վերանայվելուց հետո փորձարկվել է 2-րդ կիսամյակի քննաշրջանի տարբեր կրթական ծրագրերի 8 դասընթացների համար:

Իսկ կրթական ծրագրերի գնահատման ուղղությամբ ՄԿՈԱ բաժինը ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո կազմակերպել է հանդիպումներ 11 մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողների հետ (**ՌԾ 1.3.4**), որոնց ժամանակ քննարկվել է արդեն շրջանավարտների կարծիքը մասնագիտության կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքներին իրենց մասնագիտական կարողությունների և ձեռքբերումների համապատասխանության հարցը, պատասխանել են ներկայացված փոքր հարցաշարին: Հետագայում յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ամբիոնների, ծրագրերի ղեկավարների հետ միասին կկազմվեն կրթական ծրագրերի գնահատման հարցաթերթեր:

Ռազմավարական ծրագրի **2-րդ՝ «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի** իրականացման շրջանակներում մասնաճյուղն ունի բացթողումներ: Մասնավորապես ԵՊՀ ԻՄ-ը չունի համագործակցային ծրագրեր գիտահետազոտական կենտրոնների, արտասահմանյան գործընկերների հետ, չեն իրականացվում ըստ ուղղությունների գիտահետազոտական աշխատանքներ, ուսանողների հետազոտական կարողությունների զարգացումը վերապահված է միայն կուրսային և ավարտական աշխատանքների կատարմանը: Բայց պետք է փաստել, որ մասնաճյուղի դասախոսներն անհատապես զբաղված են հետազոտական գործունեությամբ:

1. 2018-19 ուստարում մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակվել են 1 մենագրություն, 5 դասագիրք, 4 ուսումնական ձեռնարկ, 47 գիտական հոդված:

«Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների 44 աշխատանքներ ներկայացվել են տարբեր ցուցահանդեսներում: Մասնաճյուղի 16 դասախոսներ մասնակցել են հանրապետական և միջազգային տարբեր գիտաժողովների; Հաշվետու ուստարում մասնաճյուղում կազմակերպվել է Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովը, որի 27 զեկուցումներից 10-ը մասնաճյուղի դասախոսների զեկուցումներն են եղել (**ՌԾ 2.1.1**):

2. Մշակվել են ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու մեխանիզմներ, որոնք նոր ուսումնական տարում կկիրառվեն (**ՌԾ 2.1.2**):

3. Վերանայվել են բոլոր կրթական ծրագրերը, և նրանցում պարտադիր ներառվել է հետազոտական բաղադրիչ (**ՌԾ 2.1.4**):

Ռազմավարական **3-րդ՝ «Հանրային ներգրավում և ծառայություններ» նպատակի** իրականացման շրջանակներում մասնաճյուղը վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: ԵՊՀ ԻՄ-ի հեղինակության ամրապնդմանը և հասարակական վարկանիշի բարձրացմանը նպաստում են մասնաճյուղի եռալեզու կայքը, «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջը և խումբը, ինչպես նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերը, լրատվական տարբեր միջոցների կողմից մասնաճյուղի գործունեությունը լուսաբանող նյութերը:

2019թ. մայիսին անցկացված հարցմանը մասնակցած ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման 276 ուսանողներից 164-ը (59,4%) պատասխանել է, որ հաճախ է օգտվում մասնաճյուղի պաշտոնական կայքից: Նրանք փաստել են, որ բավարարված են կայքի կառուցվածքից, նորությունների լուսաբանումից, տեղեկատվության ստացման հարմարավետությունից և լիարժեքությունից: Կայքը պարբերաբար վերակառուցվում է, համալրվում է նոր էջերով:

Այս նպատակի իրականացման շրջանակներում **չեն կատարվել** քայլեր տարածաշրջանում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկի ուսումնասիրման և լրացուցիչ կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ:

ՌԾ-ի **4-րդ՝ «Մարդկային որակյալ ռեսուրսներ» ոլորտում** մասնաճյուղի նպատակն է զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման

համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը: Նշենք, որ 2018-19 ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 118 դասախոս, այդ թվում՝ 8 պրոֆեսոր, 39 դոցենտ, 48 ասիստենտ և 34 դասախոս, որոնցից գիտական աստիճանով՝ 5 դոկտոր և 64 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 53,4% է: Մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետում դասավանդում են ՀՀ նկարիչների միության 8 և դիզայներների միության 1 անդամներ:

2018-19 ուստարում մասնաճյուղի 7 դասախոս երաշխավորվել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

Նշենք հիմնական ձեռքբերումները.

1. Մասնաճյուղի դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներն իրականացվում են «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրով» (**ՌԾ 4.1**): Այս ծրագրի շրջանակներում կրթական կառուցամասի «Անգլերենը ակադեմիական միջավայրում» մոդուլով վերապատրաստում են անցել 29, «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում» դասընթացով՝ 28 դասախոս, իսկ ընդհանուր կամընտրական դասընթացներ մոդուլով կազմակերպվել է 4 դասընթաց:

2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակի հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից (միջին թվաբանական միավորը կազմել է 4. 62):

2. Մասնաճյուղում հաշվետու ուստարում ձեռնարկվել են աշխատողների բարեկեցության մակարդակը բարձրացնելու աշխատանքներ, իրականացվել են մի շարք սոցիալական ծրագրեր (**ՌԾ 4.3**): ԵՊՀ ռեկտորի հրամանով մասնաճյուղի աշխատակիցների աշխատավարձը բարձրացել է 15%-ով, ինչի արդյունքում պրոֆեսորադասախոսական կազմի միջին աշխատավարձը կազմել է 185.554 դրամ, պրոֆեսորի աշխատավարձը ավելացել է 30.000 դրամով (կազմում է 220.426 դրամ), ամբիոնների վարիչների աշխատավարձը ավելացվել է 15.000 դրամով:

3. Սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում մասնաճյուղի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները 50% զեղչով օգտվում են Մայր բուհի

հանգստյան և մարզաառողջարանային բազաներից, նաև մասնաճյուղի արհբյուրոյի ֆիանանսական միջոցներից:

Անդրադարձ կատարելով ռազմավարական կարևոր **նպատակներից 5-րդին՝ «Որակյալ ենթակառուցվածքներ»-ին,** պետք է փաստել, որ այստեղ մասնաճյուղի ղեկավարությունը կատարում է նյութական և ֆինանսական ներդրումներ՝ կրթական ծրագրերի իրականացման պահանջներին բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ ձևավորելու համար:

1. Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման կամ հիմնանորոգման աշխատանքներ, կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում, լսարանների համար ձեռք է բերվել նոր գույք, ներդրվել է անվտանգության ժամանակակից համակարգ, Կիրառական արվեստի ֆակուլտետի խեցեգործության արվեստանոցում տեղադրվել է կավի թրծման վառարան, գրադարանի համար ստեղծվել է գրապահոց, ընթացիկ քննությունների անցկացման համար 4 լսարաններում տեղադրվել են տեսանկարահանող սարքեր և այլն: Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում և հաշվապահությունում ներդրվել և կիրառվում են աշխատավարձի հաշվման հաշվապահական ծրագրերը, e-invoising փաստաթղթերի ստորագրման ծրագիրը:

2. Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում են անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները և մասնաճյուղի «Էլեկտրոնային գրադարան» կայքէջը: 2019 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կայքը ունեցել է 203.600 այցելու և իր այցելուներին տրամադրում է 900 էլեկտրոնային գրքեր:

3. Հաշվետու ուստարում գրադարանը, որն ակտիվ համագործակցում է ԵՊՀ գիտական գրադարանի հետ, համալրվել է ավելի քան 640 միավոր գրականությամբ: Գրադարանը մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար դարձել է հանդիպումների, ազատ քննարկումների և մշակութային նախաձեռնությունների կենտրոն: Հաշվետու ուստարում գրադարանում կազմակերպվել են գրքերի

շնորհանդեսներ, բաց դաս-քննարկումներ, հեղինակների և ընթերցասերների հետ հանդիպումներ, նոր ստացված գրքերի ցուցադրություններ և լուսաբանումներ:

Ամփոփելով 5-րդ նպատակի իրականացման արդյունքները՝ փաստենք, որ ուսումնասիրությունների արդյունքներով մասնաճյուղի ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են տրամադրվող ռեսուրսներից: Օրինակ, մասնաճյուղից ուսանողների բավարարվածության հարցմանը մասնակցած առկա ուսուցման 1-ինից 3-րդ կուրսերի 268 ուսանողների ավելի քան 70%-ը բավարարված է գրադարանում առկա մասնագիտական գրականության քանակից և որակից, ընթերցասրահի սպասարկումից և լսարանների հարմարավետությունից և այլն:

Հաշվետու ուստարում մասնաճյուղը ձեռքբերումներ ունի նաև իրականացվող ծառայությունների գծով: Ռազմավարական **6-րդ՝ «Որակյալ ծառայություններ» նպատակի** գործողություններն ուղղված են եղել ուսանողական օժանդակ ծառայությունները զարգացնելուն, ուսանողական կազմակերպությունների աշխատանքները խթանելուն:

1. Մասնաճյուղի հարստությունն իր ուսանողներն են: 2018-2019 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող 1355 ուսանող (նախորդ ուստարում՝ 1580), նրանցից 1198-ը՝ վճարովի համակարգում: Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 116 ուսանող (այդ թվում՝ 3-ը արտամրցութային): Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 101 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 5 ուսանող: 2018-2019 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 283 ուսանող, այդ թվում՝ 106-ը առկա ուսուցման համակարգում:

2. 2018-2019 ուստարում երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ են հանձնվել մասնաճյուղի 377 շրջանավարտի, այդ թվում 154-ը՝ առկա ուսուցմամբ: Գերազանցության դիպլոմ է ստացել 22 շրջանավարտ (20-ը՝ առկա և 2-ը՝ հեռակա ուսուցման):

3. Մասնաճյուղի ունեցած հեղինակության և մատուցած որակյալ կրթության մասին են վկայում շրջանավարտների երախտագիտության խոսքերը և նրանց տված գնահատականները: Հարցմանը մասնակցած առկա ուսուցմամբ 124 շրջանավարտների 95%-ը բավարարված է բուհում իր ստացած կրթությունից, 94,2%-ը՝

պրոֆեսորադասախոսական կազմից, իսկ 90%-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ:

4. Իր ուսանողների կրթական կարիքները բավարարելու համար մասնաճյուղը մշտապես աջակցել է ուսանողական կառույցներին իրենց բոլոր նախաձեռնություններում, նրանց ներկայացուցիչներն ընդգրկված են կառավարման բոլոր մարմիններում, ակտիվ մասնակցում են կարևոր որոշումների կայացմանը և այլն:

Հաշվետու ուստարում ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել են մշակութային և մարզական շուրջ 50 միջոցառումներ, մրցույթներ, հանդիպումներ, կինոդիտումներ, քննարկումներ, բաց դասեր և դասընթացներ: ՈՒԽ-ն ակտիվ համագործակցում է ԵՊՀ-ի և այլ բուհերի, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների հետ: ՈՒԳԸ-ն հաշվետու ուստարում իրականացրել է 38 գիտական, կրթական ու մշակութային ծրագիր և միջոցառումներ: Ուրախացնում է մասնաճյուղի ուսանողների հետաքրքրվածությունն ու ակտիվ մասնակցությունը տարբեր ծրագրերի: Հպարտությամբ պետք է փաստել, որ «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունում հաղթել է մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհին:

5. Ուսանողների կառավարման կարողությունների զարգացման և ուսանողների առաջնորդությանն աջակցելու համար ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կողմից ուսանողներին մատուցվել են **37** լրացուցիչ կրթական ծառայություններ **25** դասընթացների և 12 հանդիպումների միջոցով: Դրանք վարել են բանկերի կառավարիչներ, տնօրեններ, ՀԿ-ների նախագահներ, Տավուշի թեմի հոգևոր առաջնորդը, գրողներ, հիմնադրամների տնօրեններ: **6** կազմակերպություններում իրականացվել են ճանաչողական այցեր, որոնք նպաստել են ուսանողների պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը:

Յուրաքանչյուր բուհի կայացման նախապայմանը նրա դիմորդներն են, և մասնաճյուղը նույնպես վարում է ընդունելության մարքեթինգային գործընթացները զարգացնելու, ընդունելությունը օպտիմալացնելու և այն տարածաշրջանի զարգացմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու քաղաքականություն: Ռազմավարական ծրագրի **7-րդ՝ «Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» նպատակի** իրականացման համար պլանավորված 9

գործողություններն էլ հիմնականում կատարվել են: Այստեղ կարևորվել են դպրոցներում շրջանավարտների հետ տարվող մասնագիտական կողմնորոշման գործընթացները:

Նշենք, որ վերջին տարիներին շրջանավարտների թվի նվազման արդյունքում նվազել է նաև մասնաճյուղի դիմորդների թիվը, սակայն ուրախությամբ պետք է փաստել, որ որոշ մասնագիտությունների ուղղությամբ ունենք դիմորդների թվի աճ և կայունություն: Հաշվետու ուստարում մասնաճյուղի բակալավրի 9 կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ ընդունվել է 76 դիմորդ (նախորդ ուստարվա 168-ի փոխարեն), այդ թվում՝ 39-ը անվճար, 37-ը վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 7 կրթական ծրագրերով՝ 40 դիմորդ (նախորդ ուստարվա 170-ի փոխարեն):

1. Քանի որ մասնաճյուղի դիմորդների շուրջ 97%-ը (103 դիմորդից 100-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են, ապա ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը: Կրթօջախը հաշվետու ուստարում կազմակերպել է շուրջ 105 հանդիպումներ մարզի 4 ավագ և 52 միջնակարգ դպրոցների, Իջևանի վարժարանի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի 7 դպրոցներում՝ (**ՌԾ 7. 1. 5):** Կազմակերպվել են նաև դպրոցների բարձր դասարանների աշակերտների թվով 6 ճանաչողական և գործնական այցեր մասնաճյուղ (**ՌԾ 7.1.4):** Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, աշակերտների համար կարդացվել են 7 ակնարկային դասախոսություններ, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն (**ՌԾ 7. 1. 6)**:

2. Դիմորդների հավաքագրման գործընթացում կարևոր նշանակություն ունեն հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվող օլիմպիադաները, որոնք տեղի են ունենում մասնաճյուղում: 2018-2019 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար 13 առարկաների գծով կազմակերպված 34 օլիմպիադաներին մասնակցել են մարզի շուրջ 235 աշակերտներ: Տարբեր պարգևատրումներ են ստացել մարզի 20 աշակերտներ (**ՌԾ 7.1.3**):

3. Մասնաճյուղն ակտիվորեն շարունակում է համագործակցությունը միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ՝ նրանց բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթությունը մասնաճյուղում շարունակելու գործընթացի շրջանակներում: Հաշվետու ուստարում կրթությունը շարունակելու

նպատակով քոլեջներից ներկայացվել է շուրջ 21 հայտ մասնաճյուղի 5 մասնագիտությունների գծով (**ՌԾ 7.1.6**):

4. Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է տպագիր տարբեր գովազդային նյութերի միջոցով. տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպություններին են տրամադրվել մասնաճյուղի գովազդային բուկլետները և մասնաճյուղի աշխատակիցների հեղինակությամբ «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում» գիրքը:

5. Դիմորդների մասնագիտական կողմնորոշման գործում կարևոր դեր ունի նաև մասնաճյուղի կայքէջը, որի «Դիմորդ» բաժնում տեղադրվում է տեղեկատվություն ընդունելության մասնագիտությունների, վարձավճարների չափի, անհրաժեշտ փաստթղթերի մասին:

6. Դիմորդների հավաքագրման գործում կարևորվում է նաև համագործակցությունը գործատու կազմակերպությունների հետ, ինչը նպաստում է ուսանողների մասնագիտական և գործնական կարողությունների զարգացմանը: «Ֆինանսներ» կրթական ծրագրի համար կարևոր ձեռքբերում է համագործակցությունը ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնագիտական կենտրոնի հետ: «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսումնառողների համար կարևոր ձեռքբերում էր համագործակցությունը Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հետ, որն ամբողջ հաշվետու ուստարում իրականացրել է տեխնոլոգիական ոլորտի հատուկ մասնագիտացված կրթական ծրագիր:

Այս նպատակի իրականացման շրջանակներում մասնաճյուղը **խնդիր ունի** օտարերկրյա դիմորդների հավաքագրման գործընթացի կազմակերպման հետ: Առայժմ մասնաճյուղը օտարերկրյա դիմորդներ չունի:

Այժմ անդրադառնանք ռազմավարական **8-րդ՝ «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում» նպատակին**: Ռազմավարական այս նպատակի գործողություններով պլանավորվել է ապահովել մասնաճյուղի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Հաշվետու ուստարվա համար պլաանավորված գործողություններն էլ ընթացքի մեջ են:

Այստեղ մասնաճյուղն իրականացրել է կոնկրետ գործընթացներ.

1. ապահովել է մասնաճյուղի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը,
2. բարձրացվել է աշխատողների հիմնական աշխատավարձը,
3. ներդրված ավանդների գծով գործող տարեկան տոկոսադրույքը ավելացնելով՝ ստացվել է ավելի բարձր եկամուտ և ապահովվել կայուն ֆինանսական հոսք,
4. բարելավվել է տպագրատան աշխատանքի որակը, որի արդյունքում մուտքերը աճել են 82 հզ-ից 308 հզ.,
5. ռեսուրսախնայողության ուղղությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես վերանորոգվել է ջեռուցման համակարգը, հսկողություն է սահմանվել կոմունալ վճարների խնայողության գծով,
6. իրականացվել է պրակտիկաների բարելավմանն ուղղված ծրագիր, որի համար հատկացվել են նյութական և ֆինանսական ռեսուրսներ՝ 338,2 հզ. դր,
7. վերանայվել է մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը, հստակեցվել է ստորաբաժանումների հաշվետվողականությունը և փաստաթղթաշրջանառությունը:

Այս նպատակի իրականացման շրջանակներում մասնաճյուղն **ունի խնդիր** ընդլայնելու մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը: Մասնաճյուղը չի մասնակցում կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի: Դեռ չեն իրականացվում բազմազան լրացուցիչ վճարովի ծառայություններ, որպեսզի ապահովեն ֆինանսական նոր հոսքեր:

Ակնկալվում է, որ մասնաճյուղը կակտիվացնի համագործակցությունը շրջանավարտների և այլ շահառուների հետ՝ նրանց կողմից ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցություններ ստանալու նպատակով: Ֆինանսական կայուն մուտքեր ապահովելու համար պետք է մշակել և իրականացնել տարբեր բիզնես ծրագրեր, այս ուղղությամբ նույնպես դեռ քիչ բան է ձեռնարկվել:

Եվ վերջին՝ **9-րդ «Միջազգայնացում և գործակցություն»** նպատակի իրականացումը մասնաճյուղի ամենադժվար խնդիրներից է, այսինքն՝ խնդիր ունենք ապահովելու մասնաճյուղի միջազգայնացումը ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Իրականացվել են մասնաճյուղի միջազգայնացմանը նպաստող որոշ գործընթացներ, մասնավորապես.

1. մասնաճյուղի կայքէջը հաշվետու ուստարվանից գործում է եռալեզու տարբերակով,
2. իրականացվել են դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման դասընթացներ. ուսանողների համար գործում են անգլերենի և ֆրանսերենի ուսուցման կենտրոնները,
3. 2018-2019 ուստարում «Ֆինանսներ» կրթական ծրագրում շարունակվել է իրականացվել կամընտրական մեկ օտարալեզու մոդուլ (գործավարություն՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն),
4. կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների շարժունությանը նպաստելու համար իրականացվել է բենչմարքինգ տեղական և մի քանի արտասահմանյան բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ, ապա կրթական ծրագրերը վերանայվել են և նոր ներկայացվել հաստատման: Այս գործընթացը շարունակվում է:

Պետք է փաստել, որ բուհի միջազգայնացման համար անհրաժեշտ են ավելի արդյունավետ և ակտիվ գործողություններ:

Ամփոփելով ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի 2018-19 ուստարվա կատարողականը՝ նշենք, որ մասնաճյուղն իր գործունեության հստակ ռազմավարությամբ, Մայր բուհի և մարզի ղեկավարության մշտական աջակցությամբ կայուն ապահովել է իր տեղը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում: